ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի մարտի 25-ից մինչև ապրիլի 1-ը Անգոլայի Հանրապետություն (Լուանդա) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը**

Գագիկ Մկրտչյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի խորհրդական

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

Գործուղման վայրը՝ Լուանդա (Անգոլայի Հանրապետություն)

Գործուղման ժամկետները՝ 25.03.2018-01.04.2018

4. **Հրավիրող կողմը**

Էնդիամա պետական ընկերություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Առարկայական բանակցություններ Անգոլայի Հանրապետությունում բնական ալմաստների և ադամանդների հետ կապված գոործունեության բացառիկ իրավունք ունեցող Էնդիամա պետական ընկերության նախագահ Ժոզե Մանուել Ավգուստո Գանգա Ժունիորի և Էնդիամայի հետ փոխկապակցված՝ ալմաստի հումքի վաճառքներ իրականացնող Սոդիամա ընկերության նախագահ Էուժենիո Բրավո Դա Ռոզայի հետ՝ ադամանդագործության բնագավառում հայ-անգոլական համագործակցություն սկսելու և հետագա զարգացում ապահովելու նպատակով:

6. **Քննարկված թեմաները**

- Անգոլայի Հանրապետությունից տարեկան շուրջ 100 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ալմաստի հումքի մատակարարարումների կազմակերպումը՝ հայկական ադամանդագործական ընկերությունների կարիքները բավարարելու նպատակով:
- Ադամանդագործական հայ-անգոլական համատեղ ձեռնարկության հիմնադրման հնարավորությունները:

- Ադամանդների մշակման ոլորտում հայկական փորձի փոխանակումը անգոլական կողմի հետ, այդ թվում տարեկան մոտ 100 անգոլացի մասնագետ պատրաստելու հնարավորությունը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Կայացել են մի շարք հանդիպումներ պրն. Գանգա Ժունիորի, պրն. Դա Ռոզայի և նրանց աշխատակազմերի մի շարք պատասխանատու պաշտոնյաների (Աննա Մարիա Ֆեյժո, Ֆիլիպե Լուիս, Էնրիկե Վիդեյրա, Թերեզա Ռոդրիգես Դիաս, Ժոզե Նեվես Սիլվա և այլն) հետ: Երկուստեք մանրամասն ներկայացվել են ադամանդագործության ոլորտի օրենսդրությունը, զարգացման ներկա ընթացքը և հեռանկարները, ընդգծվել է, որ երկու երկրներում էլ ոլորտի հետագա զարգացումը մեծապես կախված է հանդիպման ժամանակ բարձրացված և քննարկվող հարցերի արդյունավետ լուծումներից: Հայկական ադամանդագործական ընկերություններից ստացված տեղեկատվության հիման վրա անգոլական կողմի հետ քննարկվել են ալմաստի հումքի նախատեսվող մատակարարումների քանակի, որակական հատկությունների և պրոֆիլային արդյունավետության հետ կապված կոնկրետ հարցեր:

Անգոլական կողմին է փոխանցվել Էնդիամայի և Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության միջև առաջարկվող համաձայնագրի նախագիծը և նախարար Սուրեն Կարայանի նամակը պրն. Գանգա Ժունիորին՝ առաջիկայում Հայաստանի Հանրապետություն այցելելու վերաբերյալ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Պայմանավորվածություն է ձեռք բերվել հնարավորինս կարճ ժամկետներում երկու կողմերի մասնագետների միջև քննարկում սկսել համաձայնագրի նախագծի վերաբերյալ և պատրաստ դարձնել այն ստորագրման:

Էնդիամայի նախագահը վստահեցրել է, որ շահագրգիռ է Հայաստանի Հանրապետություն այցելության հարցում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առաջարկվել է ադամանդագործության ոլորտում հայ-անգոլական համագործակցության գլխավոր համաձայնագրից բխող միջոցառումների

վերաբերյալ պատրաստել առանձին համաձայնագրեր և ներկայացնել կողմերի քննարկմանը:

Նշված խնդիրների արդյունավետ լուծումը կապահովի ոլորտի հետագա աճի առաջանցիկ տեմպը:

10. Գործուղվողը

Գագիկ Մկրտչյան

11. **Ստորագրությունը, ամսաթիվը**

05.04.2018թ.